

**«Կենցաղային օդափոխիչ կայանքների էներգապիտակավորման մասին»
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 թվականի հուլիսի 11-ի թիվ 1254/2014

ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի կողմից սպառվող էներգիայի եւ
այլ ռեսուրսների սպառման վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի
ստանդարտ տեխնիկական բնութագրի միջոցով նշում կատարելու մասին»
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ
հրահանգը¹ եւ մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովը պատվիրակված ակտեր ընդունի էներգասպառող արտադրանքի պիտակավորման վերաբերյալ: Պատվիրակված ակտերը պետք է ընդունել այն դեպքում, երբ արտադրանքն ունի էներգախնայողության զգալի ներուժ եւ չնայած համարժեք ֆունկցիոնալությանը՝ արդյունավետության մակարդակներում էական տարբերություններ է ցուցաբերում, եւ երբ պարտադիր պահանջներից բացի Միության այլ օրենսդրություն կամ ինքնակարգավորում, ըստ կանխատեսումների, չի կարող առավել արագ կամ քիչ ծախսատար եղանակով իրագործել քաղաքականության նպատակները.

¹ ՊՏ L 153, 18.6.2010թ., էջ 1:

- 2) Հանձնաժողովը գնահատել է կենցաղային օդափոխիչ կայանքների տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական հայեցակետերը: Ըստ գնահատման արդյունքների՝ կենցաղային օդափոխիչ կայանքների կողմից օգտագործվող էներգիան կազմում է Միությունում կենցաղային օգտագործման ընդհանուր էներգիայի պահանջարկի զգալի մասը: Թեեւ այդ արտադրանքի էներգաարդյունավետությունն արդեն իսկ բարելավվել է, այդպիսի կայանքների կողմից էներգիայի սպառումը հետագայում նվազեցնելու մեծ հնարավորություններ կան: Գնահատման արդյունքում նաեւ հաստատվել են արդյունավետության մակարդակներում առկա էական տարբերությունները, եւ չի հայտնաբերվել որեւէ ինքնակարգավորում կամ կամավոր համաձայնագիր, որի միջոցով հնարավոր կլիներ իրագործել քաղաքականության նպատակները.
- 3) սույն կանոնակարգի գործողությունը չպետք է տարածվի օդի յուրաքանչյուր հոսքի համար 30 Վտ-ից պակաս մուտքային էլեկտրական հզորությամբ օդափոխիչ փոքր կայանքների վրա: Այդ կայանքները նախատեսված են շատ տարբեր կիրառությունների համար՝ հիմնականում ընդմիջումներով եւ միայն լրացուցիչ գործառույթներով, օրինակ՝ լողասենյակներում աշխատելու համար: Հաշվի առնելով վաճառքի մեծ ծավալները՝ օդափոխիչ այդ կայանքներն ընդգրկելը շուկայի վերահսկողության տեսանկյունից վարչական զգալի բեռ կառաջացներ՝ այդպիսով նպաստելով էներգիախնայողության ներուժի միայն փոքր մասնաբաժնին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ դրանք ունեն այն նույն ֆունկցիոնալ հնարավորությունները, որոնք հատուկ են օդափոխիչ այլ կայանքների, սույն կանոնակարգը վերանայելիս պետք է նույնանման անդրադարձ կատարվի դրանց հնարավոր ներառմանը: Ոչ կենցաղային օդափոխիչ կայանքները (ՈԿՕԿ) պետք է բացառել պիտակավորման պահանջների շրջանակից, քանի որ այդ արտադրանքն ընտրում են նախագծողներն ու ճարտարապետները, եւ այն հիմնականում անկախ է սպառողի վարքագծից եւ շուկայի վիճակից:

Բացառապես արտակարգ իրավիճակներում, բացառիկ կամ վտանգավոր միջավայրերում գործարկելու համար հատուկ նախատեսված օդափոխիչ կայանքները նույնպես պետք է բացառել, քանի որ դրանք հազվադեպ եւ կարճ ժամանակահատվածով են օգտագործվում: Բացառումներով նաեւ հստակեցվում է, որ հիմնականում ջեռուցման կամ հովացման համար նախատեսված բազմաֆունկցիոնալ կայանքները եւ խոհանոցային օդաքարշ պահարանները հանվում են այդ շրջանակից: Կենցաղային օդափոխիչ կայանքների կոնկրետ էներգասպառմանն առնչվող պիտակավորման եւ արտադրանքի ստանդարտ տեխնիկական բնութագրի վերաբերյալ պետք է սահմանել ներդաշնակեցված դրույթներ՝ արտադրողների համար այդ կայանքների էներգաարդյունավետությունը բարելավելու, վերջնական սպառողների կողմից էներգաարդյունավետ արտադրանքի ձեռքբերումը խրախուսելու եւ ներքին շուկայի գործունեությունը խթանելու համար խրախուսական միջոցներ ապահովելու նպատակով:

- 4) քանի որ կենցաղային օդափոխիչ կայանքի ձայնային հզորության մակարդակը սպառողների համար կարող է կարեւոր չափանիշ լինել, պիտակի վրա պետք է դրա վերաբերյալ տեղեկություններ ներառել:
- 5) ակնկալվում է, որ սույն կանոնակարգի եւ Հանձնաժողովի թիվ 1253/2014 կանոնակարգի (ԵՄ)¹ համակցված ազդեցության արդյունքում ընդհանուր էներգախնայողությունը 2025 թվականին կավելանա 1 300 ՊՋ-ով (45 %)՝ հասնելով մինչեւ 4 130 ՊՋ-ի:
- 6) պիտակի վրա ներկայացված տեղեկությունները պետք է ձեռք բերվեն հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդների միջոցով, որոնք հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդների՝ ներառյալ, առկայության դեպքում, ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի

¹ «Օդափոխիչ կայանքների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 1253/2014 կանոնակարգ (ԵՄ) (տե՛ս սույն Պաշտոնական տեղեկագրի 8-րդ էջը):

թիվ 1025/2012 կանոնակարգով (ԵՄ) սահմանված ընթացակարգերին համապատասխան ընդունված ներդաշնակեցված չափանիշների վրա¹.

- 7) սույն կանոնակարգով պետք է սահմանվեն պիտակների միասնական ձեւին ու բովանդակությանը, տեխնիկական փաստաթղթերին եւ տեղեկաթերթիկներին ներկայացվող պահանջները: Պետք է նաեւ սահմանվեն օդափոխիչ կայանքների հեռակա վաճառքի ցանկացած ձեւի դեպքում, գովազդում եւ տեխնիկական գովազդային նյութերում տրամադրվելիք տեղեկություններին վերաբերող պահանջներ, քանի որ համացանցի միջոցով վերջնական սպառողներին տրամադրվող տեղեկատվության կարելիությունն աճում է,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են կենցաղային օդափոխիչ կայանքներին ներկայացվող էներգապիտակավորման պահանջները:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում կենցաղային օդափոխիչ այն կայանքների նկատմամբ, որոնք՝
 - ա) միաուղղորդված (արտածծիչ կամ ներմղիչ) են՝ 30 Վտ-ից պակաս մուտքային էլեկտրական հզորությամբ.
 - բ) բացառապես նախատեսված են պոտենցիալ պայթյունավտանգ միջավայրում գործարկելու համար, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 94/9/ԵՀ հրահանգով².

¹ «Եվրոպական ստանդարտացման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1025/2012 կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ թիվ L 316, 14.11.2012թ., էջ 12):

² «Անդամ պետությունների՝ պոտենցիալ պայթյունավտանգ միջավայրում օգտագործման համար

- գ) բացառապես նախատեսված են արտակարգ իրավիճակներում կարճաժամկետ գործարկման համար եւ որոնք համապատասխանում են հակահրդեհային անվտանգության մասով շինարարական աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներին, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 305/2011 կանոնակարգով (ԵՄ)¹.
- դ) բացառապես նախատեսված են հետեւյալ պայմաններում գործարկելու համար՝
- i) երբ գործարկելիս տեղափոխվող օդի ջերմաստիճանը գերազանցում է 100 °C-ը.
 - ii) երբ գործարկելիս օդի հոսքից դուրս տեղադրված լինելու դեպքում հովհարիչն աշխատեցնող շարժիչի համար շրջակա միջավայրի ջերմաստիճանը գերազանցում է 65 °C-ը.
 - iii) երբ տեղափոխվող օդի ջերմաստիճանը կամ գործարկելիս օդի հոսքից դուրս տեղադրված լինելու դեպքում շարժիչի համար շրջակա միջավայրի ջերմաստիճանը ցածր է - 40 °C-ից.
 - iv) երբ սնուցման լարումը գերազանցում է 1 000 Վտ փոփոխական կամ 1 500 Վտ հաստատուն հոսանքը.
 - v) թունավոր, խիստ քայքայիչ կամ պայթյունավտանգ միջավայրերում կամ հղկանյութերով հարուստ միջավայրերում.
- ե) ներառում են ջերմափոխանակիչ եւ ջերմության վերականգնման համար նախատեսված ջերմային պոմպ կամ ջերմության

նախատեսված սարքավորումների եւ պաշտպանիչ համակարգերի վերաբերյալ օրենքների մոտարկման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1994 թվականի մարտի 23-ի 94/9/ԵՀ հրահանգ (ՊՏ թիվ L 100, 19.4.1994թ., էջ 1):

¹ Շինարարական արտադրանքի շուկայահանման համար ներդաշնակեցված պայմաններ սահմանող եւ Խորհրդի 89/106/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2011 թվականի մարտի 9-ի թիվ 305/2011 կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ թիվ L 88, 4.4.2011թ., էջ 5):

վերականգնման համակարգի համար ապահովում են լրացուցիչ ջերմափոխանցումն ու ջերմահեռացումը՝ բացառությամբ սառչումից պաշտպանության կամ հալեցման նպատակով ջերմության փոխանցման.

- զ) պատկանում են Հանձնաժողովի թիվ 65/2014 պատվիրակված կանոնակարգով (ԵՄ)¹ կարգավորվող օդաքարշ պահարանների դասին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները՝

- 1) «օդափոխիչ կայանք» (ՕԿ) նշանակում է էլեկտրաէներգիայով աշխատող սարքավորում, որը համալրված է առնվազն մեկ աշխատանքային անիվով, մեկ շարժիչով եւ մեկ պատյանով, ինչպես նաեւ նախատեսված է շենքում կամ շենքի որեւէ հատվածում օգտագործված օդը դրսի օդով փոխարինելու համար.
- 2) «կենցաղային օդափոխիչ կայանք» (ԿՕԿ) նշանակում է օդափոխիչ կայանք, որի դեպքում
 - ա) հոսքի առավելագույն արագությունը չի գերազանցում 250 մ³/ժ-ը.
 - բ) հոսքի առավելագույն արագությունը 250-1000 մ³/ժ-ի միջակայքում է, եւ արտադրողը հայտարարում է, որ այն նախատեսված է բացառապես կենցաղային օդափոխման նպատակներով կիրառության համար.

¹ «Կենցաղային ջեռոցների եւ օդաքարշ պահարանների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 65/2014 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 29, 31.1.2014թ., էջ 1):

- 3) «հոսքի առավելագույն արագություն» նշանակում է օդափոխիչ կայանքի օդային ծավալի հոսքի հայտարարված առավելագույն արագություն, որին կարելի է հասնել սարքավորման կազմում ընդգրկված կամ առանձին համատեղ մատակարարվող կարգավորիչներով (20°C) եւ 101 325 Պա ստանդարտ մթնոլորտային պայմաններում, երբ կայանքն ամբողջությամբ տեղակայված է (օրինակ՝ ներառյալ մաքրման ֆիլտրերը), եւ արտադրողի ցուցումների համաձայն՝ խողովակավոր ԿՕԿ-երի համար առավելագույն հոսքը կախված է արտաքին ստատիկ ճնշման տարբերության 100 Պա-ի պայմաններում օդի հոսքից, իսկ առանց խողովակի ԿՕԿ-երի համար՝ 10 (նվազագույն)-20-50-100-150-200-250 Պա արժեքների շարքից ընտրվող՝ ընդհանուր ճնշման ամենացածր հասանելի տարբերության պայմաններում այն օդի հոսքից, որը հավասար կամ ուղղակի ցածր է ճնշման տարբերության չափված արժեքից.
- 4) «միաուղղորդված օդափոխիչ կայանք» (ՄՕԿ) նշանակում է օդափոխիչ կայանք, որն օդի հոսք է առաջացնում միայն մեկ ուղղությամբ՝ կամ ներսից դեպի դուրս (արտաձծիչ) կամ դրսից դեպի ներս (ներմղիչ), երբ մեխանիկորեն առաջացած օդի հոսքը հավասարակշռվում է բնական օդի ներմղմամբ կամ արտաձծմամբ.
- 5) «երկուուղղորդված օդափոխիչ կայանք» (ԵՕԿ) նշանակում է օդափոխիչ կայանք, որն օդի հոսք է առաջացնում ներսի եւ դրսի միջեւ եւ որը սարքավորված է թե՛ արտաձծիչ եւ թե՛ ներմղիչ հովհարիչներով.
- 6) «օդափոխիչ կայանքի համարժեք մոդել» նշանակում է օդափոխիչ կայանք՝ արտադրանքի բնութագրին ներկայացվող կիրառելի պահանջներին համապատասխան նույն տեխնիկական բնութագրերով, որը, սակայն, միեւնույն արտադրողի, լիազորված ներկայացուցչի կամ ներկրողի կողմից շուկայահանվել է որպես օդափոխիչ կայանքի տարբեր մոդել:

II-IX հավելվածների նպատակներով I հավելվածում ներկայացված են լրացուցիչ սահմանումներ:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները

1. Կենցաղային օդափոխիչ կայանքներ շուկայահանելիս մատակարարները պետք է ապահովեն, որ 2016 թվականի հունվարի 1-ից բավարարվեն հետևյալ պահանջները՝
 - ա) կենցաղային օդափոխիչ յուրաքանչյուր կայանք համալրված լինի III հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող տպագրված պիտակով. պիտակը պետք է տրամադրվի առնվազն կայանքի փաթեթվածքի մեջ: Կենցաղային օդափոխիչ կայանքի յուրաքանչյուր մոդելի համար վաճառողներին պետք է տրամադրվի III հավելվածով սահմանված ձեւաչափով եւ տեղեկություններ պարունակող էլեկտրոնային պիտակ.
 - բ) տրամադրվեն IV հավելվածով սահմանված՝ արտադրանքի տեղեկաթերթիկները: Տեղեկաթերթիկները պետք է տրամադրվեն առնվազն կայանքի փաթեթվածքի մեջ: Կենցաղային օդափոխիչ կայանքի յուրաքանչյուր մոդելի համար ազատ հասանելիություն ունեցող կայքերում վաճառողներին պետք է տրամադրվեն IV հավելվածով սահմանված՝ արտադրանքի էլեկտրոնային տեղեկաթերթիկները.
 - գ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ներկայացված պահանջի դեպքում տրամադրվեն V հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
 - դ) տրամադրվեն օգտագործման վերաբերյալ ցուցումներ.
 - ե) կենցաղային օդափոխիչ կայանքի կոնկրետ մոդելի ցանկացած գովազդում, որը տեղեկություններ է պարունակում էներգիայի սպառման եւ խնայողության կամ գնի վերաբերյալ, նշվի այդ մոդելի կոնկրետ էներգասպառման դասը.

- զ) կենցաղային օդափոխիչ կայանքի կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է դրա որոշ տեխնիկական պարամետրերը, ներառի այդ մոդելի կոնկրետ էներգասպառման դասը:
2. 2016 թվականի հունվարի 1-ից շուկայահանված կենցաղային օդափոխիչ կայանքները կներկայացվեն III հավելվածի 1-ին կետով սահմանված ձեռագրի ունեցող պիտակով, եթե դրանք միաուղղորդված կենցաղային օդափոխիչ կայանքներ են, եւ III հավելվածի 2-րդ կետով սահմանված ձեռագրի ունեցող պիտակով, եթե դրանք երկուղղորդված օդափոխիչ կայանքներ են:

Հոդված 4

Վաճառողների պարտականությունները

Վաճառողներն ապահովում են հետեւյալը.

- ա) վաճառքի կետում ներկայացված յուրաքանչյուր կենցաղային օդափոխիչ կայանքի դեպքում 3(1)(ա) հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված պիտակը սարքավորման առջեւի կամ վերին մասի արտաքին մակերեսային զետեղված լինի այնպես, որ լինի հստակ տեսանելի.
- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի համար առաջարկվող կենցաղային օդափոխիչ կայանքները, որոնց դեպքում չի կարող ակնկալվել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված ապրանքատեսակը, շուկայահանվեն VI հավելվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված տեղեկություններով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկը ներկայացվել է համացանցով, ինչի դեպքում կիրառվում են VII հավելվածի դրույթները.

- գ) կենցաղային օդափոխիչ կայանքի կոնկրետ մոդելի ցանկացած գովազդում, որը տեղեկություններ է պարունակում էներգիայի սպառման եւ խնայողության կամ գնի մասին, նշում կատարվի այդ կայանքի կոնկրետ էներգասպառման դասի վերաբերյալ.
- դ) կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որը նկարագրում է կենցաղային օդափոխիչ կայանքի տեխնիկական պարամետրերը, ներառի այդ մոդելի կոնկրետ էներգասպառման դասը եւ մատակարարի կողմից տրամադրված՝ օգտագործման վերաբերյալ ցուցումները:

Հոդված 5

Չափման մեթոդները

3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվելիք տեղեկատվության նպատակներով կոնկրետ էներգասպառման դասը սահմանվում է՝ II հավելվածում ներկայացված աղյուսակի համաձայն: Կոնկրետ էներգասպառումը, էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը, տարեկան ջերմախնայողությունը, հոսքի առավելագույն արագությունը եւ ձայնային հզորության մակարդակը որոշվում են VIII հավելվածով սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդներով եւ հիմնվում են համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդների վրա:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Օդափոխիչ կայանքի համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են IX հավելվածով սահմանված ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը և այդ վերանայման արդյունքները Խորհրդատվական ֆորում է ներկայացնում ոչ ուշ, քան 2020 թվականի հունվարի 1-ը:

Վերանայման արդյունքում գնահատվում են, մասնավորապես, այլ օդափոխիչ կայանքների՝ հատկապես ոչ կենցաղային կայանքների, 30 Վտ-ից պակաս ընդհանուր մուտքային էլեկտրական հզորությամբ կայանքների հնարավոր ներառումը, ինչպես նաև կոնկրետ էներգասպառման հաշվարկումն ու դասերը պահանջվող կարգավորմամբ միաուղղորդված և երկուղղորդված կենցաղային կայանքների համար:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2014 թվականի հուլիսի 11-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՉՈՒ

*ՀԱՎԵԼՎԱԾ I***II-IX հավելվածների համար կիրառելի սահմանումները**

- 1) «կոնկրետ էներգասպառում» (ԿԷՍ) (արտահայտված կՎտժ/(մ²տ)-ով) նշանակում է բնակարանի կամ շենքի յուրաքանչյուր մ² ջեռուցվող մակերեսի օդափոխության համար էներգասպառումն արտահայտող գործակից, որը հաշվարկվում է ԿՕԿ-երի համար՝ VIII հավելվածի համաձայն.
- 2) «ծայնային հզորության մակարդակ» (L_{WA}) նշանակում է պատյանից արձակվող՝ A կորով կշռված ձայնի հզորության մակարդակի (արտահայտված դեցիբելներով (դԲ)) հարաբերակցությունը օդի ստանդարտ հոսքի դեպքում օդով փոխանցվող՝ մեկ պիկովատտ (1 պՎտ) ձայնի հզորությանը.
- 3) «բազմակի արագություններով շարժաբեր» նշանակում է հովհարչի շարժիչ, որը կարելի է գործարկել երեք կամ ավելի ֆիքսված արագություններով՝ գումարած զրոյական արագություն («անջատված ռեժիմ»).
- 4) «փոփոխվող արագությամբ շարժաբեր» (ՓԱՇ) նշանակում է էլեկտրական կարգավորիչ, որը կցված է կամ աշխատում է որպես մեկ համակարգ կամ որպես շարժիչից կամ հովհարչից առանձին փոխանցման սարք, որը հոսքի արագությունը վերահսկելու համար մշտապես հարմարեցնում է շարժիչ մատակարարվող էլեկտրական էներգիան.
- 5) «ջերմության վերականգնման համակարգ» (ԶՎՀ) նշանակում է ջերմափոխանակչով սարքավորված երկուղղորդված օդափոխիչ կայանքի այն մասը, որը նախատեսված է արտաձծվող (աղտոտված) օդում պարունակվող ջերմությունը ներմղվող (թարմ) օդին փոխանցելու համար.
- 6) «կենցաղային ԶՎՀ-ի ջերմային արդյունավետություն» (դԹ) նշանակում է ներմղվող օդի ջերմաստիճանի ավելացման եւ արտաձծվող օդի ջերմաստիճանի կորստի հարաբերակցություն՝ երկուսն էլ հարաբերած դրսի օդի ջերմաստիճանին, չափված ԶՎՀ-ի չոր պայմաններում եւ օդի

ստանդարտ պայմաններում, օդի ստանդարտ հոսքի դեպքում հավասարակշռված զանգվածային ծախսով, ներսի եւ դրսի օդի ջերմաստիճանների 13 Կ տարբերությամբ՝ առանց հովհարչի շարժիչներից ջերմային էներգիայի ավելացման ճշգրտման.

- 7) «ներքին արտահոսքի արժեք» նշանակում է պատյանի ներսում արտամղվող եւ ներմղվող օդային հոսքերի միջեւ արտահոսքի արդյունքում ՋՎՀ-ով օդափոխիչ կայանքների ներմղվող օդում առկա բանած օդի ծավալի մասնաքանակը, երբ կայանքը գործարկվում է խողովակներում չափվող՝ օդային ծավալի ստանդարտ հոսքի դեպքում, իսկ փորձաստուգումն իրականացվում է 100 Պա-ի պայմաններում.
- 8) «փոխանցում» նշանակում է ստանդարտ հոսքի դեպքում ռեգեներատիվ ջերմափոխանակչի համար ներմղվող օդ վերադարձվող արտածծվող օդի տոկոսային մասը.
- 9) «արտաքին արտահոսքի արժեք» նշանակում է կայանքի պատյանից արտահոսող օդային ծավալի ստանդարտ հոսքի մասնաքանակը, երբ կայանքը ենթարկվում է ճնշման փորձաստուգման. փորձաստուգումն իրականացվում է 250 Պա-ի պայմաններում դրանից ավելի ցածր եւ բարձր ճնշումների համար.
- 10) «խառնում» նշանակում է սարքավորման թե՛ ներքին, թե՛ արտաքին վերջամասերում արտաթողման եւ ներթողման անցքերի միջեւ օդային հոսքերի այն անմիջական վերաշրջանառությունը կամ տարաթողումը, որը չի նպաստում շենքի սենքի արդյունավետ օդափոխությանն այն դեպքում, երբ կայանքը գործարկվում է օդային ծավալի ստանդարտ հոսքի պայմաններում.
- 11) «խառնման արագություն» նշանակում է օդային ծավալի հոսքի մասնաքանակը՝ որպես ամբողջ օդի ստանդարտ ծավալի մի մաս, որը վերաշրջանառվում է սարքավորման թե՛ ներքին, թե՛ արտաքին

վերջամասերում արտաթողման եւ ներթողման անցքերի միջեւ՝ այդպիսով չնպաստելով շենքի սենքի արդյունավետ օդափոխությանն այն դեպքում, երբ կայանքը գործարկվում է օդային ծավալի ստանդարտ հոսքի պայմաններում (չափվում է ներսի ներհոսման խողովակից 1 մ հեռավորության վրա), ինչը փոքր է ներքին արտահոսքի արժեքից.

- 12) «մուտքային արդյունավետ հզորություն» (արտահայտված Վտ-ով) նշանակում է հոսքի ստանդարտ արագության եւ ընդհանուր արտաքին ճնշման համապատասխան տարբերության դեպքում մուտքային էլեկտրական հզորությունը, որը ներառում է նաեւ հովհարիչների, կարգավորիչների (այդ թվում՝ հեռակառավարման վահանակների) եւ ջերմային պոմպերի (եթե ընդգրկված են սարքավորման կազմում) մասով էլեկտրաէներգիայի պահանջարկը.
- 13) «մուտքային կոնկրետ հզորություն» (ՄԿՀ) (արտահայտված Վտ/(մ³/ժ)-ով) նշանակում է մուտքային արդյունավետ հզորության (Վտ-ով) եւ հոսքի ստանդարտ արագության (մ³/ժ-ով) միջեւ հարաբերակցությունը.
- 14) «հոսքի արագության/ճնշման սխեմա» նշանակում է հոսքի արագության (հորիզոնական առանցքներ) եւ միաուղղորդված ԿՕԿ-ի կամ երկուղղորդված ԿՕԿ-ի ներմղման կողմի ճնշման տարբերության համար կորերի խումբ, որտեղ յուրաքանչյուր կոր ներկայացնում է մեկ հովհարչի արագությունը՝ առնվազն ութ հավասարահեռ փորձարկման կետերով, իսկ կորերի քանակը տրված է հովհարչի արագության առանձին տարբերակների թվով (մեկ, երկու կամ երեք) կամ կարգավորվող արագությամբ շարժաբերով հովհարչի դեպքում այն ներառում է ՄԿՀ-ի փորձաստուգման համար օդի ստանդարտ ծավալին եւ ճնշման տարբերությանը մոտ առնվազն նվազագույն, առավելագույն եւ համապատասխանաբար միջանկյալ կորեր.
- 15) «հոսքի ստանդարտ արագություն» (արտահայտված մ³/վ-ով) նշանակում է հոսքի արագության/ճնշման սխեմայում կորի վրայի կետի այն արեւմտի

արժեքը, որը խողովակավոր կայանքների դեպքում գտնվում է հոսքի առավելագույն արագության առնվազն 70 % եւ 50 Պա ելակետի վրա կամ ամենամոտն է դրան, իսկ առանց խողովակի կայանքների դեպքում՝ հոսքի նվազագույն արագության: Երկուղղորդված օդափոխիչ կայանքների դեպքում օդային ծավալի հոսքի ստանդարտ արագությունը վերաբերում է մատակարարվող օդի ներհոսման անցքին:

- 16) «կարգավորման գործակից (ԿԳՎՆ)» նշանակում է ԿԷՍ-ի հաշվարկի ճշգրտման գործակից, որը կախված է օդափոխիչ կայանքի մաս կազմող կարգավորչի տեսակից՝ VIII հավելվածի 1-ին աղյուսակում տրված նկարագրության համաձայն:
- 17) «կարգավորման պարամետր» նշանակում է չափելի պարամետր կամ չափելի այնպիսի պարամետրերի խումբ, որոնք ենթադրաբար ներկայացնում են օդափոխության պահանջարկը, օրինակ՝ հարաբերական խոնավության (CH_2O), ածխաթթու գազի (CO_2), ցնդող օրգանական միացությունների (SOU) կամ այլ գազերի մակարդակը, ինֆրակարմիր մարմնի ջերմային էներգիայի կամ ուլտրաձայնային ալիքների արտացոլման, մարդու կողմից լույսերի կամ սարքավորման գործարկումից արձակվող էլեկտրական ազդանշանների առկայությունը, շարժումը կամ շարժման հայտնաբերումը:
- 18) «ձեռքով կարգավորում» նշանակում է ցանկացած տեսակի կարգավորում, որի դեպքում պահանջվող կարգավորում չի կիրառվում:
- 19) «պահանջվող կարգավորում» նշանակում է այնպիսի սարք կամ սարքերի խումբ, որոնք ընդգրկված են սարքավորման կազմում կամ առանձին են տրամադրվում, որոնցով չափվում է կարգավորման պարամետրը, իսկ արդյունքն օգտագործվում է կայանքի՝ հոսքի արագությունը եւ (կամ) խողովակներում հոսքի արագություններն ավտոմատ կարգավորելու համար:
- 20) «Ժամացույցի կարգավորում» նշանակում է օդափոխիչ կայանքի հովհարչի արագությունը եւ (կամ) հոսքի արագությունը կարգավորելու համար

նախատեսված ժամացույցով (օրվա ժամերով կարգավորվող) օգտագործողի ինտերֆեյս՝ առնվազն երկու հետաձգվող ժամանակահատվածով շաբաթվա առնվազն յոթ օրվա համար կարգավորվող հոսքի արագության՝ ձեռքի կարգավորումներով, օրինակ՝ ժամանակահատվածներ, որոնց ընթացքում կիրառվում է հոսքի նվազեցված կամ զրոյական արագություն.

- 21) «պահանջվող կարգավորմամբ օդափոխություն (ՊԿՕ)» նշանակում է պահանջվող կարգավորմամբ օդափոխիչ կայանք.
- 22) «խողովակավոր կայանք» նշանակում է օդափոխիչ կայանք, որը նախատեսված է շենքում մեկ կամ ավելի սենյակներ կամ փակ տարածքներ օդատար խողովակներով օդափոխելու համար, ինչպես նաև նախատեսված է խողովակների միացումներով համալրվելու համար.
- 23) «առանց խողովակի կայանք» նշանակում է մեկ սենյակի օդափոխիչ կայանք, որը նախատեսված է շենքում մեկ սենյակ կամ փակ տարածք օդափոխելու համար եւ որը նախատեսված չէ խողովակների միացումներով համալրվելու համար.
- 24) «պահանջվող կենտրոնական կարգավորում» նշանակում է խողովակավոր օդափոխիչ կայանքի պահանջվող կարգավորում, որով կենտրոնական մակարդակում օդափոխվող ամբողջ շենքի կամ շենքի հատվածի համար նախատեսված մեկ սենսորի հիման վրա մշտապես կարգավորվում է հովհարչի արագությունը (արագությունները) եւ հոսքի արագությունը.
- 25) «պահանջվող տեղային կարգավորում» նշանակում է օդափոխիչ կայանքի պահանջվող կարգավորում, որով խողովակավոր օդափոխիչ կայանքի համար նախատեսված մեկից ավելի սենսորների կամ առանց խողովակի կայանքի համար նախատեսված մեկ սենսորի հիման վրա մշտապես կարգավորվում է հովհարչի արագությունը (արագությունները) եւ հոսքի արագությունները.
- 26) «ստատիկ ճնշում (p_{st})» նշանակում է ընդհանուր ճնշումը՝ չհաշված հովհարչի դինամիկ ճնշումը.

- 27) «ընդհանուր ճնշում (p_f)» նշանակում է հովհարչի արտաթողման խողովակառուստի հատվածում եւ հովհարչի մուտքի խողովակառուստի հատվածում ստագնացիոն ճնշման միջեւ տարբերությունը.
- 28) «ստագնացիոն ճնշում» նշանակում է ճնշում, որը չափվում է արձակվող գազի որոշակի կետում, եթե դրա հոսքը պետք է դադարեցվեր իզոէնտրոպիկ պրոցեսի միջոցով.
- 29) «դինամիկ ճնշում» նշանակում է ճնշում, որը հաշվարկվում է՝ հաշվի առնելով զանգվածային ծախսը եւ գազի միջին խտությունը արտաթողման եւ կայանքի արտաթողման հատվածում.
- 30) «վերաօգտագործման ջերմափոխանակիչ» նշանակում է ջերմափոխանակիչ, որը նախատեսված է առանց որեւէ մաս շարժելու ջերմային էներգիան օդի մի հոսքից մյուսին փոխանցելու համար, ինչպես օրինակ՝ զուգահեռ հոսքով, լայնական հոսքով կամ հանդիպակաց հոսքով կամ դրանց համակցությամբ թիթեղավոր կամ խողովակավոր ջերմափոխանակիչ կամ էլ գոլորշու դիֆուզիայով թիթեղավոր կամ խողովակավոր ջերմափոխանակիչ.
- 31) «ռեգեներատիվ ջերմափոխանակիչ» նշանակում է ռոտացիոն ջերմափոխանակիչ, որը սարքավորված է ջերմային էներգիան օդի մի հոսքից մյուսին փոխանցելու համար նախատեսված պտուտանիվով՝ ներառյալ թաքնված ջերմային էներգիայի փոխանցմանը նպաստող նյութով, շարժաբերի մեխանիզմով, պատյանով կամ շրջանակով եւ մի հոսքից մյուսն օդի անցումն ու արտահոսքը նվազեցնելու համար նախատեսված փականներով. այդպիսի ջերմափոխանակիչներն ունեն խոնավության վերականգնման տարբեր աստիճաններ՝ կախված օգտագործված նյութից.
- 32) «օդի հոսքի կախվածությունը ճնշման տարբերություններից» առանց խողովակի ԿՕԿ-ի համար նշանակում է + 20 Պա ընդհանուր արտաքին ճնշման տարբերության դեպքում ԿՕԿ-ի՝ հոսքի առավելագույն արագությունից եւ -20 Պա ընդհանուր արտաքին ճնշման տարբերության

դեպքում ԿՕԿ-ի՝ հոսքի առավելագույն արագությունից առավելագույն շեղումների միջև հարաբերակցությունը.

- 33) «ներքին եւ (կամ) արտաքին հերմետիկությունը» առանց խողովակի ԿՕԿ-ի համար նշանակում է հոսքի արագություն (արտահայտված մ³/ժ-ով) ներսի եւ դրսի օդի միջև, երբ հովհարիչը (հովհարիչները) անջատված է (են):
-

ՀԱՎԵԼՎԱԾ II

Կոնկրետ էներգասպառման դասերը

Կենցաղային օդափոխիչ կայանքների կոնկրետ էներգասպառման (ԿԷՍ) դասերը՝ հաշվարկված միջին կլիմայական պայմանների համար՝

Աղյուսակ 1


Դասակարգումը 2016 թվականի հունվարի 1-ից

ԿԷՍ-ի դաս	ԿԷՍ՝ արտահայտված կՎտոժ/տ.մ ²
A+ (ամենաարդյունավետ)	ԿԷՍ < - 42
A	- 42 ≤ ԿԷՍ < - 34
B	- 34 ≤ ԿԷՍ < - 26
C	- 26 ≤ ԿԷՍ < - 23
D	- 23 ≤ ԿԷՍ < - 20
E	- 20 ≤ ԿԷՍ < - 10
F	- 10 ≤ ԿԷՍ < 0
G (ամենաքիչ արդյունավետ)	0 ≤ ԿԷՍ

ՀԱՎԵԼՎԱԾ III

Պիտակը


1. 2016 թվականի հունվարի 1-ից հետո շուկայահանված ՄՕԿ-երի համար պիտակը՝



Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.
- III. էներգաարդյունավետությունը. սարքավորման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը: Էներգաարդյունավետությունը նշվում է «միջին» կլիմայական պայմանների համար.
- IV. ձայնային հզորության մակարդակը (L_{WA})՝ արտահայտված դԲ-ով, կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը.
- V. հոսքի առավելագույն արագությունը՝ արտահայտված մ³/ժ-ով, կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը, ՄՕԿ-երը ներկայացնող մեկ սլաքով:

2. 2016 թվականի հունվարի 1-ից հետո շուկայահանված ԵՕԿ-երի համար պիտակը՝




Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

1. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.

- II. մատակարարի մոդելի նույնականացուցիչը.
- III. Էներգաարդյունավետությունը. սարքավորման էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը: Էներգաարդյունավետությունը նշվում է «միջին» կլիմայական պայմանների համար.
- IV. ձայնային հզորության մակարդակը (L_{WA})՝ արտահայտված դԲ-ով, կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը.
- V. հոսքի առավելագույն արագությունը՝ արտահայտված մ³/ժ-ով, կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը, ԵՕԿ-երը ներկայացնող՝ հակառակ ուղղություններով երկու սլաքներով:

3. 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված՝ կենցաղային օդափոխիչ կայանքների պիտակները պետք է ունենան հետևյալ ձևը՝



որտեղ՝

պիտակը պետք է ունենա առնվազն 75 մմ լայնություն եւ 150 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրվում է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը պետք է, այնուամենայնիվ, համամասն լինի վերը նշված մասնագրերին:

Ֆոնը պետք է լինի սպիտակ:

Գույները պետք է ունենան ԿԿԴՍ ծածկագիրը՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին եւ սեւ՝ հետեւյալ օրինակի համաձայն՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ:

Պիտակը պետք է բավարարի բոլոր հետեւյալ պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին)՝

1. **ԵՄ պիտակի սահմանագծերը՝** 3,5 կետ, գույն՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 2.5 մմ:
2. **ԵՄ պատկերանիշը՝** գույները՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:
3. **Էներգիայի պատկերանիշը՝** գույնը՝ X-00-00-00:

Ներկայացված գրաֆիկական պատկերը՝ ԵՄ պատկերանիշ + էներգիայի պատկերանիշ՝ լայնությունը՝ 62 մմ, բարձրությունը՝ 12 մմ:

4. **Պատկերանիշի տակ գտնվող եզրագիծը՝** 1 կետ, գույնը՝ կապտականաչ 100 %, երկարություն՝ 62 մմ:

5. A+ - G սանդղակը՝

- սլաքը՝ բարձրությունը՝ 6 մմ, բացատը՝ 1 մմ՝ գույները՝
 - ամենաբարձր դասը՝ X-00-X-00,
 - երկրորդ դասը՝ 70-00-X-00,
 - երրորդ դասը՝ 30-00-X-00,

- չորրորդ դասը՝ 00-00-X-00,
 - հինգերորդ դասը՝ 00-30-X-00,
 - վեցերորդ դասը՝ 00-70-X-00,
 - յոթերորդ դասը՝ 00-X-X-00,
 - վերջին դասը՝ 00-X-X-00,
- տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 13 կետ, մեծատառեր, սպիտակ:

6. Կոնկրետ էներգասպառման դասը

- սլաքը՝ լայնություն՝ 17 մմ, բարձրությունը 9 մմ, 100 % սեւ.
- տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 18,5 կետ, մեծատառեր, սպիտակ, «+» պայմանանշաններ, «Կալիբրի» տառատեսակ, թավ 11 կետ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Ձայնի հզորության մակարդակը՝ դԲ-ով՝

- եզրագիծը՝ 1.5 կետ՝ գույնը՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 2.5 մմ.
- արժեքը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ, 100 % սեւ.
- «դԲ»՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 10 կետ, 100 % սեւ:

8. հոսքի առավելագույն արագությունը՝ արտահայտված մ³/ժ-ով.

- եզրագիծը՝ 1.5 կետ, գույնը՝ կապտականաչ 100 %, կլոր անկյուններ՝ 2.5 մմ.
- արժեքը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ, 100 % սեւ.
- մ³/ժ. «Կալիբրի» տառատեսակ, թավ 16 կետ, 100 % սեւ.
- մեկ կամ երկու սլաքներ
 - յուրաքանչյուրի լայնությունը՝ 10 մմ, յուրաքանչյուրի բարձրությունը՝ 10 մմ:

— գույնը՝ 100 % կապտականաչ:

9. Էներգիա՝

— տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 6 կետ, մեծատառեր, սեւ:

10. Ստանդարտ ժամանակահատված՝

— տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 8 կետ:

11. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը

12. Մատակարարի մոդելի նույնականացուցիչը

13. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 62 × 10 մմ տարածության մեջ:

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Արտադրանքի տեղեկաթերթիկը**

3(1)(բ) հոդվածում նշված՝ կենցաղային օգափոխիչ կայանքի՝ արտադրանքի վերաբերյալ տեղեկաթերթիկում զետեղված տեղեկությունները պետք է ներկայացված լինեն հետևյալ հերթականությամբ եւ ներառված լինեն արտադրանքի բրոշյուրի կամ արտադրանքի հետ տրամադրվող այլ գրականության մեջ՝

- ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը, այսինքն՝ սովորաբար տառաթվային ծածկագիրը, որն օգտագործվում է կենցաղային օգափոխիչ կայանքի կոնկրետ մոդելը նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից տարբերակելու համար.
- գ) յուրաքանչյուր կիրառելի կլիմայական գոտու համար կոնկրետ էներգասպառումը (ԿԷՍ)՝ արտահայտված կՎտժ/(մ²տ)-ով, եւ ԿԷՍ-ի դասը.
- դ) հայտարարված դասակարգումը՝ սույն կանոնակարգի 2-րդ հոդվածի համաձայն (միաուղղորդված կամ երկուղղորդված).
- ե) տեղադրված կամ տեղադրելու համար նախատեսված շարժաբերի տեսակը (բազմակի արագություններով շարժաբեր կամ փոփոխվող արագությամբ շարժաբեր).
- զ) ջերմության վերականգնման համակարգի տեսակը (վերաօգտագործման, ռեգեներատիվ, առկա չէ).
- է) ջերմության վերականգնման համակարգի ջերմային արդյունավետությունը (տոկոսներով կամ «ոչ կիրառելի», եթե տվյալ արտադրանքը ջերմության վերականգնման համակարգ չունի).

- ը) հոսքի առավելագույն արագությունը՝ արտահայտված $m^3/ժ$ -ով.
- թ) հովհարչի շարժաբերի՝ ներառյալ շարժիչով կարգավորվող ցանկացած սարքավորման մուտքային էլեկտրական հզորությունը հոսքի առավելագույն արագության դեպքում (Վտ-ով).
- ժ) ձայնային հզորության մակարդակը (L_{WA})՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.
- ժա) հոսքի ստանդարտ արագությունը՝ արտահայտված $m^3/վ$ -ով.
- ժբ) ճնշման ստանդարտ տարբերությունը՝ արտահայտված Պա-ով.
- ժգ) ՄԿՀ՝ արտահայտված Վտ/ $(m^3/ժ)$ -ով.
- ժդ) կարգավորման գործակիցը եւ կարգավորման դասակարգումը՝ VIII հավելվածի 1-ին աղյուսակում ներկայացված համապատասխան սահմանումների եւ դասակարգման համաձայն.
- ժե) ներքին եւ արտաքին արտահոսքի հայտարարված առավելագույն արժեքները (տոկոսներով) երկուղորդված օդափոխիչ կայանքների համար կամ փոխանցումը (միայն ռեգեներատիվ ջերմափոխանակիչների համար), ինչպես նաեւ արտաքին արտահոսքի արժեքները (տոկոսներով) խողովակավոր միաուղորդված օդափոխիչ կայանքների համար.
- ժզ) առանց խողովակի միաուղորդված այն օդափոխիչ կայանքների խառնման արագությունը, որոնք նախատեսված չեն օդի ո՛չ ներթողման, ո՛չ արտաթողման հատվածում մեկ խողովակի միացումով սարքավորվելու համար.
- ժէ) ֆիլտրերով օգտագործման համար նախատեսված ԿՕԿ-երի դեպքում ֆիլտրի վերաբերյալ տեսանելի նախազգուշացման տեղը եւ նկարագրությունը, այդ թվում՝ տեքստը, որտեղ նշվում է կայանքի շահագործման եւ էներգաարդյունավետության համար ֆիլտրերը պարբերաբար փոխելու կարելիությունը.

- ժը) միաուղղորդված օդափոխիչ կայանքների դեպքում՝ ցուցումներ բնական օդի ներմղման/արտածման նպատակով սարքավորման առաջնամասում ներթողման/արտաթողման կարգավորվող ցանցեր տեղադրելու վերաբերյալ.
- ժթ) ինտերնետային հասցե նախնական տեղադրման/քանդման ցուցումների համար.
- ի) միայն առանց խողովակի կայանքների դեպքում՝ օդի հոսքի կախվածությունը + 20 Պա եւ - 20 Պա ճնշման տարբերություններից.
- իա) միայն առանց խողովակի կայանքների դեպքում՝ ներքին/արտաքին հերմետիկությունը՝ արտահայտված մ³/ժ-ով.
- իբ) էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը (էՏՍ) (արտահայտված կՎտժ էլեկտրաէներգիա/տ-ով).
- իգ) տարեկան ջերմախնայողությունը (ՏՋԽ) (արտահայտված կՎտժ նախնական էներգիա/տ-ով) յուրաքանչյուր տեսակի կլիմայական պայմանների դեպքում («միջին», «տաք», «ցուրտ»):
-

*ՀԱՎԵԼՎԱԾ V***Տեխնիկական փաստաթղթերը**

3(1)(գ) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են առնվազն հետևյալը՝

- ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
- բ) մատակարարի մոդելի նույնականացուցիչը, այսինքն՝ սովորաբար տառաթվային ծածկագիրը, որն օգտագործվում է կենցաղային օդափոխիչ կայանքի կոնկրետ մոդելը նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից տարբերակելու համար.
- գ) անհրաժեշտության դեպքում, կիրառված ներդաշնակեցված ստանդարտների հղումները.
- դ) անհրաժեշտության դեպքում, օգտագործված մյուս հաշվարկման մեթոդները, չափման ստանդարտները եւ մասնագրերը.
- ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու լիազորություններ ունեցող անձի նույնականացման տվյալները եւ ստորագրությունը.
- զ) անհրաժեշտության դեպքում, չափումների տեխնիկական պարամետրերը, որոնք սահմանված են VIII հավելվածին համապատասխան.
- է) ընդհանուր չափսերը.
- ը) ԿՕԿ-ի տեսակի նշումը.
- թ) մոդելի կոնկրետ էներգասպառման դասը, ինչպես սահմանված է II հավելվածով.
- ժ) յուրաքանչյուր կիրառելի կլիմայական գոտու համար կոնկրետ էներգասպառումը (ԿԷՍ).

ժա) ձայնային հզորության մակարդակը (L_{WA}).

ժբ) VIII հավելվածին համապատասխան կատարված հաշվարկների արդյունքները:

Մատակարարները կարող են վերոնշյալ ցանկի վերջում ներառել լրացուցիչ տեղեկություններ:

*ՀԱՎԵԼՎԱԾ VI***Տրամադրվելիք տեղեկություններն այն դեպքերում, երբ վերջնական սպառողները ցուցադրված արտադրանքը կարող են տեսնել միայն համացանցում**

1. Եթե ակնկալվում է, որ վերջնական սպառողները ցուցադրված արտադրանքը կարող են տեսնել միայն համացանցում, ապա տեղեկությունները տրամադրվում են հետևյալ հերթականությամբ՝
 - ա) մոդելի կոնկրետ էներգասպառման դասը, ինչպես սահմանված է II հավելվածում.
 - բ) յուրաքանչյուր կիրառելի կլիմայական գոտու համար կոնկրետ էներգասպառումը (ԿԷՍ)՝ արտահայտված կՎտժ/(մ²տ)-ով.
 - գ) հոսքի առավելագույն արագությունը (արտահայտված մ³/ժ-ով).
 - դ) ձայնային հզորության մակարդակը (L_{WA})՝ արտահայտված դԲ(A)-ով, կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը:
2. Եթե տրամադրված է արտադրանքի տեղեկատվության տեղեկաթերթիկում պարունակվող այլ տեղեկություններ, ապա այն տրամադրվում է IV հավելվածում նշված ձևով եւ հերթականությամբ:
3. Սույն հավելվածում նշված տեղեկությունները տպագրվում կամ ցուցադրվում են ընթերցման տառաչափով եւ տառատեսակով:

*ՀԱՎԵԼՎԱԾ VII***Համացանցի միջոցով վաճառքի, վարձակալության կամ ապառիկ վաճառքի
դեպքում տրամադրվելիք տեղեկությունները**

1. Սույն հավելվածի 2-5-րդ կետերի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝
 - ա) «դիսփլեյի մեխանիզմ» նշանակում է ցանկացած էկրան՝ ներառյալ սենսորային էկրան կամ այլ վիզուալ տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվում են ինտերնետային բովանդակությունն օգտագործողներին ցուցադրելու համար.
 - բ) «ներկառուցված դիսփլեյ» նշանակում է վիզուալ ինտերֆեյս, որում պատկերը կամ տվյալների հավաքածուն հասանելի է դառնում մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ մեկ այլ պատկերի կամ տվյալների հավաքածուի՝ սենսորային էկրանի ընդլայնմամբ.
 - գ) «սենսորային էկրան» նշանակում է հպմանն արձագանքող էկրան, ինչպես օրինակ՝ պլանշետային համակարգչինը, սալակարգչինը կամ սմարթֆոնինը.
 - դ) «այլընտրանքային տեքստ» նշանակում է տեքստ, որը տրամադրվում է որպես այն գրաֆիկի այլընտրանք, որը թույլ է տալիս ներկայացնել տեղեկությունները ոչ գրաֆիկական ձևով, որում ցուցասարքերը չեն կարող վերարտադրել գրաֆիկները, կամ որպես հասանելիությանը նպաստող միջոց, ինչպես օրինակ՝ ձայնի սինթեզի հավելվածների մուտքային տվյալները:
2. 3(1)(ա) հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված համապատասխան պիտակը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝

արտադրանքի գնի կողքին՝ 3(2) եւ (3) հոդվածում նշված ժամանակացույցի համաձայն: Պիտակի չափը պետք է այնպիսին լինի, որ հստակ տեսանելի եւ ընթեռնելի լինի եւ համապատասխանի III հավելվածում նշված չափին: Պիտակը կարող է ցուցադրվել ներկառուցված դիսփլեյի միջոցով, որի դեպքում պիտակին հասանելիություն ունենալու համար օգտագործվող պատկերը պետք է համապատասխանի սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված մասնագրերին: Ներկառուցված դիսփլեյի կիրառման դեպքում պիտակը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:

3. Պիտակին հասանելիություն ունենալու համար օգտագործվող պատկերը ներկառուցված դիսփլեյի դեպքում՝

ա) պիտակի վրա նշված արտադրանքի էներգաարդյունավետության դասին համապատասխանող գույնով սլաք է.

բ) ցույց է տալիս արտադրանքի էներգաարդյունավետության դասը սպիտակ գույնով, գնի տառաչափին համարժեք տառաչափով, եւ

գ) ունի հետեւյալ երկու ձեւաչափերից մեկը՝



4. Ներկառուցված դիսփլեյի դեպքում պիտակի ցուցադրման հաջորդականությունը հետեւյալն է՝

ա) սույն հավելվածի 3-րդ կետում նշված պատկերը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին.

բ) պատկերը հղում է պարունակում պիտակին.

գ) պիտակը ցուցադրվում է մկնիկի կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ պատկերի վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ.

- դ) պիտակը ցուցադրվում է ելնող պատուհանով, նոր ներդիրով, նոր էջով կամ էկրանի ներդրված դիսփլեյով.
- ե) սենսորային էկրաններին պիտակի խոշորացման համար կիրառվում են սենսորային խոշորացման համար սարքվածքների պայմանական նշանները.
- զ) պիտակի ցուցադրությունն ավարտվում է «փակել» ընտրանքի կոճակի միջոցով կամ փակելու այլ ստանդարտ մեխանիզմով.
- է) գրաֆիկի համար այլընտրանքային տեքստը, որը պետք է ցուցադրվի պիտակի ցուցադրության ձախողման դեպքում, արտադրանքի էներգաարդյունավետության դասն է, որը ներկայացվում է գնի տառաչափին համարժեք տառաչափով:
5. 3(1)(բ) հոդվածի համաձայն մատակարարների կողմից տրամադրված՝ արտադրանքի համապատասխան տեղեկաթերթիկը ցուցադրվում է դիսփլեյի մեխանիզմի վրա՝ արտադրանքի գնի կողքին: Չափը պետք է այնպիսին լինի, որ արտադրանքի տեղեկաթերթիկը հստակ տեսանելի եւ ընթեռնելի լինի: Արտադրանքի տեղեկաթերթիկը կարող է ցուցադրվել ներկառուցված դիսփլեյի միջոցով, որի դեպքում տեղեկաթերթիկին հասանելիություն ունենալու համար օգտագործվող հղման վրա հստակ եւ ընթեռնելի կերպով նշվում է «Արտադրանքի տեղեկաթերթիկ»:
- Ներկառուցված դիսփլեյի օգտագործման դեպքում արտադրանքի տեղեկաթերթիկը հայտնվում է մկնիկի առաջին կտտոցով, մկնիկի նշորդը դրա վրայով անցկացնելով կամ հղման վրա սենսորային էկրանի ընդլայնմամբ:
-

ՀԱՎԵԼՎԱԾ VIII

Չափումները եւ հաշվարկները

1. Կոնկրետ էներգասպառումը (ԿԷՍ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\begin{aligned} \text{ԿԷՍ} = & t_{\text{տ}} * \dot{m}_{\text{էգ}} * q_{\text{գուտ}} * \text{MISC} * \text{ԿԳՎ}^x * \text{ՄԿՀ} - t_{\text{ժ}} * \Delta T_h * \eta * \eta_h^{-1} * h_{\text{օդ}} \\ & * (q_{\text{ստ}} - q_{\text{գուտ}} * \text{ԿԳՎ} * \text{MISC} * (1 - \eta * \eta_t)) + Q_{\text{հալ}} \end{aligned}$$

որտեղ՝

- ԿԷՍ-ը բնակարանի կամ շենքի յուրաքանչյուր մ² ջեռուցվող մակերեսի օդափոխության համար կոնկրետ էներգասպառումն է [կՎտժ/մ²տ]։
- $t_{\text{տ}}$ -ն տարեկան գործարկման ժամերն է [ժ/տ]։
- $\dot{m}_{\text{էգ}}$ -ը նախնական էներգիայի գործակիցն է էլեկտրաէներգիայի արտադրության եւ բաշխման համար [-]։
- $q_{\text{գուտ}}$ -ը յուրաքանչյուր մ² ջեռուցվող մակերեսի համար պահանջվող օդափոխության զուտ ցուցանիշն է [արտահայտված մ³/ժմ²-ով]։
- MISC -ը դասակարգման ընդհանուր գործակիցն է, որը ներառում է օդափոխության արդյունավետության, խողովակների արտահոսքի եւ լրացուցիչ ներհոսման գործակիցները [-]։
- ԿԳՎ -ն օդափոխության կարգավորման գործակիցն է [-]։
- x -ն այն աստիճանացույցն է, որի հիմքում ընկած է ջերմային էներգիայի եւ էլեկտրաէներգիայի խնայողության միջեւ ոչ գծայնությունը՝ կախված շարժիչի եւ շարժաբերի առանձնահատկություններից [-]։
- ՄԿՀ -ն մուտքային կոնկրետ հզորությունն է [արտահայտված կՎտ/(մ³/ժ)-ով]։
- $t_{\text{ժ}}$ -ն ջեռուցման սեզոնի ընդհանուր ժամերն է [արտահայտված ժամերով]։

- ΔT_h -ը ներսի (19 °C) եւ դրսի օդի ջերմաստիճանների միջին տարբերությունն է ջեռուցման սեզոնի կտրվածքով՝ հանած արեային եւ ներքին էներգիայի ավելացման 3 Կ ճշգրտումը [արտահայտված Կ-ով].
- η_h -ը սենքի ջեռուցման միջին արդյունավետությունն է [-].
- $h_{o\eta}$ -ը հաստատուն ճնշման եւ խտության դեպքում օդի կոնկրետ ջերմային հզորությունն է [արտահայտված կՎտ/մ³ K-ով].
- $q_{ստ}$ -ն յուրաքանչյուր մ² ջեռուցվող մակերեսի բնական օդափոխության ստանդարտ արագությունն է [մ³/ժմ²].
- η_g -ն ջերմության վերականգման ջերմային արդյունավետությունն է [-].
- $Q_{hալ}$ -ը հալեցման համար յուրաքանչյուր մ² ջեռուցվող մակերեսի տարեկան ջեռուցման էներգիան է [կՎտ/մ²ա], որի հիմքում ընկած է փոփոխվող էլեկտրական դիմադրություն ունեցող ջերմությունը:

$$Q_{hալ} = t_{hալ} * \Delta T_{hալ} * C_{o\eta} * q_{ստ} * նէգ,$$

որտեղ՝

- $t_{hալ}$ -ը հալեցման ժամանակահատվածի տեւողությունն է, օրինակ, երբ դրսի օդի ջերմաստիճանը ցածր է - 4 °C-ից [արտահայտված ժ/տ-ով], եւ
- $\Delta T_{hալ}$ -ը հալեցման ժամանակահատվածում դրսի օդի ջերմաստիճանի եւ -4 °C-ի միջին տարբերությունն է՝ արտահայտված Կ-ով:

$Q_{hալ}$ -ը վերաբերում է միայն վերաօգտագործման ջերմափոխանակիչով երկուղղորդված կայանքներին. միաուղղորդված կայանքների կամ ռեգեներատիվ ջերմափոխանակիչներով կայանքների դեպքում $Q_{hալ} = 0$:

ՄԿՀ-ն եւ η_g -ն արժեքներ են, որոնք ստացվել են փորձաստուգումների եւ հաշվարկման մեթոդների արդյունքում:

Այլ պարամետրեր եւ դրանց արժեքները ներկայացված են 1-ին աղյուսակում: Պիտակի դասակարգման համար ԿԷՍ-ը հիմնվում է «միջին» կլիմայական պայմանների վրա:

2. Յուրաքանչյուր 100 մ² մակերեսի համար տարեկան էներգասպառումը (SէՍ) (արտահայտված տարեկան կտրվածքով կՎտժ/տարի էներգիայով) եւ տարեկան ջերմախնայողությունը ((SՋԽ), որը նշանակում է ջեռուցման համար էներգասպառման տարեկան խնայողություն (արտահայտված տարեկան կտրվածքով կՎտժ՝ վառելիքի այրման ջերմատվության արժեքով) հաշվարկվում են հետեւյալ ձեւով՝ 1-ին կետում նշված սահմանումների կիրառմամբ, ինչպես նաեւ 1-ին աղյուսակում ներկայացված փաստացի արժեքներով՝ յուրաքանչյուր տեսակի կլիմայական պայմանների համար (միջին, տաք եւ ցուրտ)՝

$$SէՍ = t_{\varphi} * q_{qույր} * MISC * ԿԳՎ^x * ՄԿՀ + Q_{hալ}$$

$$SՋԽ = t_{\varphi} * \Delta T_h * \eta_{\eta h}^{-1} * C_{o\eta} * (q_{ս\varphi} - q_{qույր} * ԿԳՎ * MISC * (1 - \eta_{\eta 2}))$$

Աղյուսակ 1

ԿԷՍ-ի հաշվարկման պարամետրերը

ընդհանուր դասակարգումը						MISC
Խողովակավոր օդափոխիչ կայանքներ						1,1
Առանց խողովակի օդափոխիչ կայանքներ						1,21
օդափոխության կարգավորում						ԿԳՎ
Ձեռքով կարգավորում (առանց ՊԿՕ)						1
Ժամացույցով կարգավորում (առանց ՊԿՕ)						0,95
Պահանջվող կենտրոնական կարգավորում						0,85
Պահանջվող տեղային կարգավորում						0,65
շարժիչ եւ շարժաբեր						x-արժեք
միացված/անջատված եւ 1-արագությամբ						1
2-արագությամբ						1,2
3-արագությամբ						1,5
փոփոխվող արագությամբ						2
Կլիմա	t_թ-ն՝ ժամով	ΔT_h-ը՝ Կ-ով	t_{հալ}-ը՝ ժամով	ΔT_{հալ}-ը՝ Կ-ով	Q_{հալ} (*)-ը կՎտ/տմ²	
Յուրտ	6 552	14,5	1 003	5,2	5,82	
Միջին	5 112	9,5	168	2,4	0,45	
Տաք	4 392	5	—	—	—	
*Հալեցումը վերաբերում է միայն վերաօգտագործման ջերմափոխանակիչով երկուղորդված կայանքներին եւ հաշվարկվում է որպես՝ $Q_{հալ} = t_{հալ} * \Delta t_{հալ} * c_{օդ} * q_{գուտ}$ նեգ: Միաուղորդված կայանքների կամ ռեգեներատիվ ջերմափոխանակիչներով կայանքների դեպքում $Q_{հալ} = 0$						
Տրված արժեքները						արժեքը
օդի կոնկրետ ջերմային հզորությունը՝ c _{օդ} -ը՝ կՎտ/(մ ³ Կ)-ով						0,000344
յուրաքանչյուր մ ² ջեռուցվող մակերեսի օդափոխության զուտ ցուցանիշի նկատմամբ պահանջը՝ q _{գուտ} ՝ մ ³ /ժմ ² -ով						1,3
յուրաքանչյուր մ ² ջեռուցվող մակերեսի համար բնական օդափոխության ստանդարտ արագությունը՝ q _{ստ} ՝ մ ³ /ժմ ² -ով						2,2
տարեկան գործարկման ժամերը՝ t _տ ժ-ով						8 760
նախնական էներգիայի գործակցի էլեկտրական հզորության արտադրություն եւ բաշխում՝ նեգ						2,5
սենքի ջեռուցման արդյունավետություն՝ η _հ						75 %

*ՀԱՎԵԼՎԱԾ IX***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման
ընթացակարգը**

II հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակներով անդամ պետությունների մարմինները ստուգում են մեկ ԿՕԿ: Եթե չափված արժեքները կամ չափված արժեքների հիման վրա հաշվարկված արժեքները 3-րդ հոդվածի իմաստով չեն համապատասխանում արտադրողի կողմից հայտարարված արժեքներին, ապա չափումներն իրականացվում են երեք այլ կայանքների համար՝ հաշվի առնելով 1-ին աղյուսակում բերված թույլատրելի շեղումները:

Եթե այս կայանքների համար չափված արժեքների թվաբանական միջինը չի համապատասխանում պահանջներին՝ հաշվի առնելով 1-ին աղյուսակում բերված թույլատրելի շեղումները, ապա համարվում է, որ տվյալ մոդելը եւ մյուս բոլոր համարժեք մոդելները չեն համապատասխանում II հավելվածի պահանջներին:

Անդամ պետությունների մարմինները տրամադրում են ստուգման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ մյուս անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Անդամ պետությունների մարմինները կիրառում են VIII հավելվածում սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

Աղյուսակ 1

Պարամետրը	Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները
ՄԿՀ	Չափված արժեքը չպետք է հայտարարված առավելագույն արժեքից ավելի մեծ լինի, քան 1,07 անգամ
Ջերմային արդյունավետությունը ԿՕԿ-ի համար	Չափված արժեքը չպետք է ավելի, քան 0,93 անգամ պակաս լինի հայտարարված նվազագույն արժեքից:
Ձայնային հզորության մակարդակը	Չափված արժեքը չպետք է ավելի լինի, քան հայտարարված առավելագույն արժեքը՝ գումարած 2 դԲ:

Սույն հավելվածով սահմանված՝ փորձարկման առավելագույն թույլատրելի շեղումները կիրառվում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից իրականացվող՝ չափված պարամետրերի ստուգման նկատմամբ, եւ որպես թույլատրելի շեղում չեն օգտագործվում մատակարարի կողմից տեխնիկական փաստաթղթերում արժեքներ սահմանելու նպատակով: Պիտակի վրա կամ արտադրանքի(էլեկտրական) տեղեկաթերթիկում զետեղված արժեքները եւ դասերը մատակարարի համար չպետք է լինեն ավելի բարենպաստ, քան տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքները:
